ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ, ք.Երևան **30.01.2025թ**

« ԳՈԳ ՇԻՆ » ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գործընկեր-1), մի կողմից, «ԱԼՏԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Բասենցյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գործընկեր-2), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու համար՝ մասնակցելով ***Իջևանի համայնքապետարանի*** կողմից ***ԲՏավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի եկեղեցի տանող ճանապարհի տուֆ քարով սալիկապատում աշխատանքների*** ձեռքբերման նպատակով հայտարարված ***ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/01*** ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքվելու դեպքում դրա շրջանակներում կատարելու սալաիկապատման աշխատանքներ:

1.2. Կողմերը սույն Ընթացակարգի շրջանակներում պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

1.2.1. Գործընկեր - 1

Ֆինանսական միջոցներ, ներառյալ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները, աշխատանքային ռեսուրսներ, Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի լիցնեզիա

1.2.2.Գործընկեր - 2

Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ուղիներ լիցնեզիայի ներդիրը

1. 3 Սույն Պայմանագրի շրջանակներում կողմերի համագործակցությունը կառուցվում է՝ փոխադարձ շահերի, իրավահավասարության, փոխօգնության, փոխադարձ օգուտների և շահերի սկզբունքների վրա:

Սույն պայմանագիրը սահմանում է Կողմերի փոխգործակցության ընդհանուր սկզբունքները, որոնց հիման վրա նրանք մշակում և իրականացնում են Պայմանագրի առարկայի իրացման ուղղված համատեղ գործողություններն մեխանիզմներն ու ծրագրերը:

Սույն պայմանագրի իրականացման նպատակով Կողմերն անհրաժեշտության դեպքում իրականացնում են համատեղ խորհրդակցություններ, կազմակերպում աշխատանքային խմբեր, տեղեկացնում միմյանց նոր գաղափարների ու տեխնոլոգիաների, աշխատանքի նոր հեռանկարային ձևերի մասին, որոնք նշանակություն ունեն նրանց ձեռնարկատիրական գործունեության համար:

Կողմերից յուրաքանչյուրը սույն պայմանագրի շրջանակներում գործում է ինքնուրույն՝ իր սեփական միջոցների և ռեսուրսների հաշվին:

Կողմերը որոշակի գործառնությունների մասով կոնկրետ ֆինանսական պայմանները համաձայնեցնում են իրենց առանձին լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անքակտելի մասերը:

Կողմերի համագործակցությունն ու փոխգործակցությունը նույնպես իրականացվում են հետևյալ ձևերով.

- Տեղեկատվության հասանելիության և փոխանակության ապահովում՝ յուրաքանչյուր Կողմի կողմից ինքնուրույն սահմանված ծավալով,
- Համատեղ խորհրդատվությունների, խորհրդակցությունների անկացում
- Յուրաքանչյուր կողմի մասնագետների մասնակցություն նախագծերում, որոնց իրացումն իրականացվում է կամ սույն պայմանագրի մի Կողմի, կամ սույն Պայմանագրի Կողմերի կողմից համատեղ:
- Կազմակերպչական և իրավական օգնության ցուցաբերում իրավունքների և շահերի պաշտպանության գործում՝ համագործակցության ուղղություններով միջոցառումներ մշակելու և անցկացնելու ժամանակ:
- Տնտեսաիրավական կապերի հաստատում երրորդ անձանց հետ և միմյանց տեղեկացում այդպիսի կապերի արդյունքների վերաբերյալ՝ ձևակերպված կողմերի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

2. Ընդհանուր գործերը վարելը

2.1. Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարում է Գործընկեր 1-ը, մասնավորապես՝

Իջևանի համայնքապետարանի կողմից կազմակերպված **ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/01** ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում հանդես գալու՝ ներառյալ Գործընկեր 2-ի անունից, փաստաթղթեր ներկայացնելու, ստանալու, բանակցելու, առաջարկներ ներկայացնելու, մասնակցության հայտը ստորագրելու (նաև էլեկտրոնային թվային ստորագրությամբ) և ներկայացնելու, գների նվազեցման և այլ նպատակով վարվող բանակցություններին մասնակցելու և նոր գնային առաջարկ ներկայացնելու, **ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/01** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում **ընտրված մասնակից դառնալու դեպքում պայմանագրի նախագիծը և համաձայնագիրը ստորագրելու**, ինչպես նաև ստորագրելու պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունները, պայմանագիրը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը :

2. 2. Կողմերի ընդհանուր գործերի առնչվող որոշումները, որոնք նշված չեն Պայմանագրի 2. 1 կետում, Կողմերի (լիազորագրի հիման վրա գործող նրանց լիազորված ներկայացուցիչների) կողմից ընդունում են Կողմերի ընդհանուր ժողով անցկացնելու միջոցով և ամրագրվում են արձանագրության մեջ:

2. 3. Բոլոր որոշումներն ընդունվում են միաձայն՝ բացառությամբ Պայմանագրով սահմանվածների: Կողմերից որևէ մեկն իրավունք չունի խուսափել յուրաքանչյուր քննարկվող հարցի շուրջ որոշում կայացնելուց:

2. 4. Ընդհանուր ժողովի արձանագրությունը վարում է այն Կողմը, որը Կողմերի ընդհանուր ժողովի անցկացման ժամանակահատվածում լիազորված է վարել Կողմերի ընդհանուր գործերը: Ընդհանուր ժողովին ներկա Կողմերը (նրանց լիազորված ներկայացուցիչները) ստորագրում են ընդհանուր արձանագրությունը:

2.5. Յուրաքանչյուր Կողմ օժտված է Կողմերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացում նախաձեռնելու իրավունքով՝ անկախ ավանդի ձևից և դրա դրամական համարժեքից: Ընդհանուր ժողով նախաձեռնող Կողմը պարտավոր է նախապես, սակայն ոչ պակաս, քան 5 աշխատանքային օրում էլեկտրոնային հասցեով յուրաքանչյուր Կողմին ծանուցել Կողմերի ժողովի անցկացնելու անհրաժեշտության մասին՝ մատնանշելով նախաձեռնության գործոնը: Կողմերից որևէ մեկը իրավունք չունի խուսափել Կողմերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցությունից:

2.6. Կողմերի ընդհանուր ժողովի արձանագրությունը այն Կողմերի կողմից ստորագրվելու պահից համարվում է Պայմանագրի անքակտելի մասը:

2. 7. Երրորդ անձանց հետ հարաբերություններում՝ Ընթացակարգի հայտի ստորագրում և ներկայացում, այլ անհրաժեշտ փաստաթղթերի հաստատում, Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր 1-ի (տնօրենի) լիազորությունը հաստատվում է սույն պայմանագրով և/կամ համապատասխան լիազորագրի հիմքով:

2.8. Կողմերից յուրաքանչյուրը, անկախ այն բանից, լիազորված է վարել սույն պայմանագրով ընդհանուր գործերը, թե՝ ոչ, իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

3. Շահույթի բաշխումը

3.1. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունները ամբողջովին կատարելուց հետո:

3.2. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է ընդհանուր գործում նրանց ավանդի արժեքին համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ համատեղ գործունեության պայմանագրով կամ մասնակիցների համաձայնությամբ:

3. 3. Շահույթին մասնակցելուց մասնակիցներից որևէ մեկին զրկելու մասին համաձայնությունն առոչինչ է:

4. Կողմերի պատասխանատվությունն ընդհանուր պարտավորությունների համար

Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրն ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով՝ անկախ դրանց ծագման հիմքից:

5. Բաժնեմասերի ստացման կարգը

5.1. Կողմերն իրավունք ունեն ազատ տնօրինելու ընդհանուր բաժնային սեփականությունում իրենց պատկանող բաժնեմասը՝ մյուս կողմի՝ այդ բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի պահպանման պայմանով:

5.2. Բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի կիրառման կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

6. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծարելու կարգը

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

6.2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրի կատարումից (դադարեցնել Պայմանագիրը)՝ առանց պատճառների բացատրության:

Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող Կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս Կողմերին կամ Կողմին դուրս գալու օրվանից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ:

6.3. Պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունն ստացվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, Կողմերը պետք է բաժանեն ընդհանուր բաժնային սեփականություն համարվող գույքը: Ծանուցումն ուղարկվում է սույն Պայմանագրում նշված հասցեներով:

6.4. Սույն պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝

6.4.1. անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու.

6.4.2. սնանկ ճանաչելու.

6.4.3.մահվան կամ սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու կամ վերակազմակերպվելու դեպքերում:

7. Այլ պայմաններ

7. 1 Սույն պայմանագիրը կնքված է հայերենով և ռուսերենով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
7. 2 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
7. 3 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր 1	**Գործընկեր 2**
<<ԳՈԳ ՇԻՆ>> ՍՊԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՍԵՎԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ Փ., Շ 8, ԲՆ. ԲՆ.3 ՀՎՀՀ՝ 08624918 Տնօրեն՝ Ա.Հարությունյան ստորագրություն	«ԱԼՏԵՔ » ՍՊԸ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ 13փ թիվ 9/1 Տնօրեն Ա. Բաբանցյան ստորագրություն